ՄԱՅԻՍ 25/7 ՅՈՒՆԻՍ 1904

Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 49

ԵՐԱԶՆՈՒՏԻՒՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Ֆր. տարեկան

Հասցէ՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Руссе

ՔԱՄԷԼԷՕՆՈՒԹԻՒՆ

Յեղափոխականութեան ամենահետաքրքրաշարժ երեւոյթներից մէկը հայերիս մէջ քամէլէօնութիւնն է։ Մի քանի «կուսակցութիւններս», ինչպէս, օր., Կովկասում այս վերջին տարին բուսածները և հներից մէկը, այդ քամէլէօնութիւնը դարձրել են մինչև իսկ սկզբունք, որ առաջադրում է նրանց կողմից իբրև իմաստութեան վերջին խօսք։ Ի հարկէ, կայ իմաստութիւն և. իմաստութիւն, և մենք բնաւ միտք չունենք քամէլէօնական իմաստութեան դափնիները պոկել իրանց արժանի ճակատներից։ Բայց և այնպէս, այդ իմաստութեան մէջ մենք տեսնում ենք մի-տեսակ ոճիր ընդդէմ գաղափարի և սրա սրբութեան։ Կարծես թէ մէկ անհաւատալի երազի մէջ ես գտնւում, երբ դիտում ես այն զանազան ու գոյնզգոյն գլխարկները, որոնցով զարդարում են իրանց մեր հայ յեղափոխականներից շատերը Կովկասում։ Սոցիալիզմը, գէթ իբրև խօսք, այժմ մեծ մոդայի մէջ է նրանց մէջ։

Սոցիալիզմի բուռն հեղեղը եկել և իր յորձանքներով լացել է հայկական իրականութեան մակերեւոյթը և դրա հողի տակից սկսել են դուրս ցցել կեանքի հին արմատներն իրանց ամբողջ տգեղ մերկութեամբ և դրանց հետ միասին առաջ են եկել նոր տունկեր՝ լեխոստում յոյսերով շքեղ բուսականութեան աճման ապագայում։ Եթէ ո՛չ գիտակցաբար, գէթ սոցիալիզմի աւելի և աւելի աճող հոսանքի ազդեցութեան տակ, հայ բուրժուական հասարակութեան մէջ առաջացել է մի-տեսակ ենթադրութիւն, մութ ու երկիւղած, որ սոցիալիստական գաղափարն այլ ևս կատարելապէս դրաւել է իր քաղաքացիական իրաւունքը մեր կեանքում և որ նա դարձել է այն կենտրոնական առանցքը, որի շուրջն է այսուհետև այլ ևս դառնալու հայկական հասարակական կեանքն իր ամեն հիմնական երևոյթներով և նրա հասարակական-քաղաքական ճակատագիրը։ Կոյրերն իսկ, առանց տեսնելու, իրանց ներքին մութ աշխարհում սկսել են զգալ, որ սոցիալիստական գաղափարն արև է, աղբիւր լոյսի ու ջերմութեան, կենսաւորող մարդկութեան կեանքի շարժման, կենսատու սկզբունք ազատութեան և ապագայ հանրակենցաղի։ Սոցիալիզմն՝ իբրև ձգողական մի զօրութիւն, որ մագնիսի պէս դէպի իրան է քարշում ժամանակակից կեանքի ամեն երևոյթները և ներկայացնում նրանց լուծումը. սոցիալիզմը՝ իբրև ժամանակակից կենսական պայմանների բարդութիւններից դուրս գալու ուղին ցոյց տուող և մարդկութեան առաջ բացող ճանապարհ ազատ և անվախճան զարգացման, — սոցիալիզմն իր էութեամբ հանդիսանում է յեղափոխական և պահանջելով յեղափոխական գործունէութիւն՝ իր մէջ է ամփոփում ներկայ ժամանակիս յեղափոխական գաղափարը։ Եւ ահա ինչո՛ւ հայերիս մէջ այլև այլ «կուսակցութիւններս» իրանց տեսնում են հարկադրուած ուղղակի կամ անուղղակի կերպով անուանել սոցիալիստ, հակառակ պարագային վտանգ կրելով զրկուել յեղափոխական անունից, մէկ անո՛ւն, որը միայն կարող է տալ նրանց գոյութեան իրաւունք։ Բայց նրանք սոցիալիստ չե՛ն, այլ հագած են սոցիալիզմի դիմակ, որի տակ թաքնուած կան ամեն քամէլէօնական գոյները — նացիոնալիստական, բուրժուական, մանրաբուրժուական, պարզ դեմոկրատական, և այդ բոլոր գոյները փոփոխւում են միջավայրի համեմատ, այսինքն տեղի, բոպէի, շրջանի, դէպքերի, յարմարութեան և անյարմարութեան համեմատ։ Եւ այդպիսով նրանց համար սոցիալիզմը դարձել է մէկ ապրանք, որ անցնում է ամեն ներկերի տակ և ծախւում «մուշտարիի» ճաշակի համաձայն։

Սոցիալիստական ազատարար ու վսեմ գաղափարն ու գործն այդպէս դարձնել քամէլէօնական պատնէշութեան մեկ առարկայ — յայտնւում է այդ կուսակցութիւնների մասն ու բաժինը։ Վիժուածքներ բուրժուական ազգայնական զանազան խաւերի ու մթնոլորտի, այդ «կուսակցութիւնները» մինչև իսկ քաջութիւն չունեն համարձակաբար յայտարարելու իրանց գաղափարն ու հաւատքը, եթէ գիտակցութիւն ունեն դրանց մասին, և կամ ներկայանալու բացարձակաբար իբրև իրանց դասակարգի շահերի ջատագով։ Եւ իրանց քամէլէօնութեամբ, սոցիալիստական դիմակի տակ, նրանք ո՛չ միայն անօգուտ են հանդիսանում իրանց դասակարգի հասարակական շահերին, այլ ինչ մեծ կարևորութիւն ունի սոցիալ-դեմոկրատի համար — ծառայում են պրոլետարիատի դեմ անգիտակցական մասսայի մտքերի մոլորեցման, և շեղում նրա գիտակցական մասի ջանքերի ուղիղ ընթացքը։ Պրոլետարիատը, որ պատմականապէս կրում է իրանում իրա և ամբողջ հասարակութեան կատարեալ ազատագրութեան գաղափարն ու գործը և դրանց գործադրութիւնը, այդպիսով, այդ քամէլէօնական սոցիալիստութեան խառնիճաղանճի ջանքով դատապարտւում է զուրկ մնալու իր դասակարգային գիտակցութիւնից, իր պատմական ու հասարակական ինքնագործունէութիւնից, և ուրեմն իր պատմական միսսիայի կատարելու պարտականութիւններից ու դերից, և անդամալուծելով այդ մտքով՝ գլորւում է նացիոնալիստական, մանրաբուրժուա-դեմոկրատական և այլ բուրժուական ճառամաքան քամէլէօնականութեան սպանիչ որոգայթը։ Ազգային շովինիզմի մանր բնաղդները հրահրելով նրա մէջ, այդ քամէլէօնականութիւնը կերակրում է նրան, պրոլետարիատին, այլ և այլ շլացուցիչ միրաժներով և մի ոտքը կոխած Թիւրքաց-Հայաստանի հողի վրայ, միւս ոտքը դրած կովկասահայ իրականութեան վրայ, առաջինի ազգային կռւի պահանջի աղաղակներով լցնում է նաև երկրորդի մթնոլորտը, ուր սակայն կռիւն ազգային չէ եւ չէ կարող լինել, այլ հանա-Ռուսասանի կռիւ է. սոցիալ-քաղաքական կռիւ է, որի դրօշը կրում է պրոլետարիատն այսօր։ Լաբախաղաց քամէլէօններ՝ որոնք իրանց «յեղափոխական» ֆանֆարոնութիւններով ժողովրդային մեծ գործը դարձրել են բուրժուական աքէրաև ժանանգին դիպլեսանտիզմ, առանց ղեկավարիչ գաղափարի, առանց պարզած սկզբունքի, առանց որոշ դաւանանքի, առանց ուղղութեան այլանդակ խառնուրդոմեն բանիցքիչ-քիչ և ամբողջութեամբ ոչինչ, անգոյն անտաղանդ, անծրագիր։ Եւ դիմելով ռուսահայ պրոլետարիատին մենք ասում ենք. — Զգո՞յշ կաց. սոցիալիստ-ֆէդերալիստ, սոցիալիստ-նացիոնալիստ, սոցիալիստ-հայրենասէր և այլ մի շարք անուններ, որոնց միշտ կպած են սոցիալիստական գաղափարի նը-կատմամբ դրատումներ, բայց մի և նոյն ժամանակ սոցիալիզմն անուանող «մտացածին, երազ» և կամ «հիմա թողնենք այդ գաղափարը, նախ ազատենք բռնակալից և յետոյ տեսնենք թէ ինչ համ ու հոտ ունի սոցիալիզմը», բայց և միշտ պոռացող «մենք սոցիալիստներ ենք» և իսկոյն դրան կից արձակելով վայրենի աղաղակ՝ «Կովկասը կովկասցիների՞ն» — զգո՞յշ կաց, ռուսահայ պրոլետարիատ, այդ քամէլէօնական խառնիճաղանճից։ Սոցիալիզմի դիմակի տակ՝ դա վիժուածքն է այն բուրժուազիայի, որ քեզ կեղեքում ու շահագործում է այսօր և որն իր նոյն այդ վիժուածքների միջոցով ուզում է քեզ շահագործել նաև քաղաքական կռւում։ Նրանք չե՛ն ուզում առաջացնել քո դասակարգային գիտակցութիւնը. դա կը սփռէր քո շուրջն այնպիսի մի լոյս, որ ատում են նրանք։ Նրանք չե՛ն ուզում, որ քո քաղաքական կռւում առաջ դու բերես քո դասակարգային շահերի պաշտպանութիւնն ու պահանջես գործադրութիւնը. դա հակառա՛կ է նրանց դասակարգի շահերին

ու տիրապետական տենչերին։ Ա՛յն, ինչ նրանք ուզում են, դա՝ քո յեղափոխական ոյժն է, որ նրանք կը ծառայեցնեն իրանց օգտին ա՛յսօր, իսկ վաղն ամեն տեսակ օրէնքներով կը բռնակալեն. դա՝ քո ապստամբական կրուին է, որ նրանց ձեռքին կը լինի գործիք կառուցանելու ո՛չ թէ այն քաղաքական շէնքը, ուր դու ազատաբար կարողանաս ձգտել քո վերջնական սոցիալիստական նպատակներին, այլ ուր դու, տապալելով ցարիզմիՔաստիլիան, գտնես բուրժուազիայի բաստիլիայի խորում։ Այն, ինչ նրանք ուզում են, դա՝ քո արիւնն է, որ կը շահագործեն իրանց դասակարգի ազատագրութեան համար, ինչպէս այսօրուանից արդէն շահագործում են քո աշխատանքն իրանց հարստացնելու համար։ Զգո՞յշ կաց, պրոլէտարիատ. կաղմակերպիր ինքդ իրրև առանձին, դասակարգային քաղաքական կուսակցութիւն, միախառնուած Ռուսասանի Սոցիալ–Դեմոկրատիայի շարքերի հետ՝ յանուն ընդհանուր գործի. առա՛ջ եկ. իբրև քաղաքական ինքնուրոյն գործօն ոյժ՝ զինուած քո ձգտումների ու նպատակների ծրագրով և ընթանալով իբրև ինքնուրոյն մի բանակ ընդդէմ ցարիզմի, յանուն ռամկավարական ընդարձակ քաղաքական պահանջների՝ համաձայն սոցիալիստական գործունէութեան ազատութեան համար անհրաժեշտ պայմանների, յանուն վերջնական նպատակիդ, սոցիալիզմի, յետագայ իրականացման։ Եւ թո՛ղ, թո՛ղ այդ քամէլէօնական կուսակցութիւնները իրանց բուրժուական մտքովն ու ոգով. թո՛ղ, ինքդ անկախ քաղաքական մարմին, նրանք, այդ ապիկարները, թո՛ղ զործեն, եթէ կարող են առանց քեզ։ Ա՜հ, և այն ժամանակ, երբ նրանք կարողացան գործնականապէս յայտնուել զէթ յեղափոխական զօրութիւն՝ ներկայացուցիչ ազատամիտ բուրժուազիայի, միայն ա՛յդ ժամանակ դու կարող ես, այս կամ այն առանձին ձեռնարկում ո դեպքում համաձայնութիւն կայացնել նրանց հետ ցարիզմի դէմ մղած կռուի ընթացքում։ Միշտ, սակայն, զգո՞յշ կաց. սոցիալիստի դիմակի տակ թաքնուած այդ քամէլէօնութիւնը գործնականապէս ուիթէօրիապէս շարունակ արգելք ու դիմադրող է քո դասակարգային գիտակցութեան զարգացման և քո համախմբման իբրև քաղաքական որոշ, անկախ և ինքնուրոյն մարմին։ Դա նշանակում է՝ արգելք ու դիմադրող ձեռքդ տեսնելու քո դասակարգային այն զէնքերը, որոնցով դու պէտք է յաղթանակես ցարիզմը. տէր լինես քաղաքական ազատութիւնների և կատարես քո սոցիալիստական գործունէութիւնը, որն ուղղելով քո քայլերը դէպի քո ընդհանուր ազատագրութեան, քեզ հետ միասին ազատագրելու է նաև քո ամբողջ ժողովրդին, քո ամբողջ ազգին, բոլոր ազգերին, ամբողջ մարդկութեանը։

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ш.

Դաշնակցական ծրագրի եռութիւնը

(շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Կեղեքման եւ շահագործման դատապարտուած ժողովուրդը (նեղ իմաստով!) չէ ճանաչում. չէ ըմբռնում այլ տանջանք, այլ ճնշում. բայց եթէ իւր սեփական անձինը. իւր նմանինը, իւր վիճակին մատնուած հասարակական շերտինը։ Սոցիօլոգիական այդ ընդհանուր օրէնքին ծանօթ է բուրժուական իդէօլոգիան եւ դրա հետ միասին «ընկերական գիտութեան դրական օրէնքներու» վրայ հիմնուած Դաշնակցական ծրագիրը։ Սակայն կապիտալիստական ըէժիմի «իդէալական» վերակառուցումների սիրահարները հնարողական մեծ ընդունակութիւն ունեն. որպէսզի նուազեցնեն սոցիօլոգիական այդ օրէնքը, նրանք դիմում են ժողովուրդի «թոյլ նեարդին»՝ տնտեսական շահին եւ դեմոկրատիզմին։

«Միայն ատով (քաղաքական իրաւունքներ ձեռք բերելով) մենք չենք կարող ապահովել աշխատաւորին՝ իր աշխատանքին լիակատար կերպով օգտուելու հնարաւորութիւն։ Աշխատաւոր դասին շահերու դիմաց կանգնած է այժմ մը ալ»։ (11) տնտեսական անհաւասարութեան ոյժը։ Եւ որպէսզի ցոյց տայ, թէ ծրագիրը «խեղճ աշխատաւոր ժողովուրդի» շահերի պաշտպանն էլէ, ուտոպիստ հեղինակները յայտարարում են՝ «տնտեսական այդ չարիքին տնտեսապէս կեղեքող դասին դէմ ալ կը կռուիմ այժմ» (այժմ? !, 15)։ Բայց մոռանալով, որ այդ յայտարարութեամբ թերեւս վախենան «ազնուականին եւ գոռող իշխանաւորին», իսկոյն դարձնում են նրանք կուռի զէնքը ընդհանուր թշնամու դէմ։ Միմիայն փողատէր-վաշխառու դասն է, որ «երկաթէ ճանկերով կը քամէ աշխատաւոր ժողովուրդին արիւնը». միայն այդ հրէշն է, որին „կը դիմէ թէ արդիւնաբերողը եւ թէ սպառողը, թէաշխատանքի մթնոցներու կարօտաշխատաւորը եւ թէ զուարճութիւններու ետեւէ ինկած ազնուականը“ (14)։ Ուրեմն յանուն «ազգաբնակութեան բոլոր խաւերուն» պէտք է հէնց այժմ կուռել այդ ընդհանուր վնասակար տարրի դէմ։ «Ազգաբնակութեան բոլոր խաւերուն» էլ դուր կգայ ծրագրի այդ «իդէալիստական» կոիւը. մանր ու միջին, բարձր ու ստորին մարդիկ ուրախ ժպիտով ձեռքները կշփեն, որ Դաշնակցական ծրագրի բոլորի տնտեսական շահերի անխտիր պաշտպանն է. իսկ «ազգասէր եւ զէմոկրատ ինտելիդէնցիան» ոգեւորուած թմբուկ կզարնէ՝ «տեսէ՛ք, դաշնակցական կուսակցութիւնը ամբողջ ազգի եւ մասնաւորապէս „խեղճ աշխատաւոր ժողովուրդի“ շահն է պաշտպանում“...։ Բայց մեր ուտոպիստ հեղինակները զգում են, որ «խեղճ աշխատաւոր ժողովուրդը» միայն վաշխառուի դէմ կուռելով այնքան էլ գոհ չի լինի, որովհետեւ հէնց ինքը ծրագիրն է ասում, որ տնտեսական զարգացմամբ զարգանում է նաեւ տնտեսական անհաւասարութիւնը եւ միեւնոյն ժամանակ ինքն է ուզում տնտեսական զարգացման գործակցել, ուստի պէտք էր նրան նաեւ յոյսերով ու խոստումներով կերակրել. պէտք է պղտորել նրա միտքը. հաւատացնելով, որ տնտեսական զարգացմամբ առաջ եկող «հարուստներու եւ աղքատներու միջեւ խորանդունդի» առաջը պիտի առնէ դաշնակցական կուսակցութիւնը, գործ դնելով „ամեն միջոց պահպանելու գոյութիւն ունեցող համայնական սկզբունքները“, աշխատելով «տարածել համայնական սեփականութիւնը եւ համայնական աշխատանքը» (16)։ Այդ մանր-բուրժուական թոթովանքներով եւ „Հայաստանի հոլին վրայ տեղական եւ պատմական հանգամանքներու ազդեցութեան տակ“ (19) ծագած համայնական ձեւերին երկրպագելով, ծրագիրը մանր գիւղացու եւ մանր արհեստաւորի ականջին ապագայ տնտեսական երջանկութեան քաղցր մեղեդի է երգում։ Իւր այդ „նարոդնիական“ զառանցական «վարդապետութեամբ“ մեր „գիտական» ծրագիրը աւելի եւս է խրել ուտոպիայի մէջ, քան այն «իւտոպիական վարդապետութիւնը», որից նա վեցերորդ էջում պոչը ծալել „за тридесять зъмель“ էր փախել։ Սակայն գիտէ՞ք ինչու համար է ծրագիրը տալիս տնտեսական այդ ռեցէպտը. օ՜, աշխարհի սրբեր... „որպէսզի աւելի պատրաստ գանձինք անցնելու հանրային այն կազմակերպութեան. որ այսօր վաղը պիտի հաստատուի տնտեսապէս աւելի զարգացած երկիրներու մէջ պրոլէտարիայի յեղափոխութիւնովը“ (16.!!)։ Եթէ ուզենայինք այստեղ ցոյց տալ ծրագրի թէօրիտիկական եւ տրամաբանական այդ բաւիբզուկ սխալը, պիտի շատ հեռուն գնայինք. բայց ծրագրի հեղինակները արել են այդ «սխալը» կա՛մ անգիտակցօրէն՝ անտեղեակ լինելով «ընկերական գիտութեան դրական օրէնքներուն», կամ էլ գիտակցօրէն՝ ցանկանալով, որ ծրագիրը „կենսական“ լինի „տնտեսապէս աւելի զարգացած երկիրներու“ մէջ իշխող յեղափոխական ձգտումների նկատմամբ։

Այսպէս՝ տնտեսական անհաւասարութեան» վերաբերմամբ, այսինքն

Ա. Յ. ԱՍՄԱՆ 2

ԶՈՒԼՈՒՄԸ

ԿԵՑԱՆՔՆ Է ԵՐԿՆՈՒՄ.

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՕԵՄԱ

Ազատութեան հայրը բռնութիւնն է,
Իսկ մայրը՝ անիրաւութիւնն.

(Շարունակութիւն)

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Բէհրամ ամու տան բակում, սաքուի վրայ նստած են ինքը՝ Բէհրամը, իւր կին՝ Զմրուխտ եւ մի քանի գիւղացիք։ Ամառային երեկոյ, մոայլ երկնքի տակ։

Մի գիւղացի — (խորհրդաւոր կերպով դիմելով Բէհրամին).

Զէ՛, Բէհրամ ամի, իմ ասելն է՛ն է,
Նրան դիմադրել ու չը կատարել
Իւր ցանկութիւնը՝ վա՛յ թէ չը կարանք
Ու այն ժամանակ ...

Բեհրամ — (ընդհատելով նրան) *Է՛յ դու բարեկամ,*
Ես կարծում էի թէ հաւաքւել էք
Այս ծերութեան մէջ ինձ յուսադրելու
Եւ թեւ ու թիկունք ինձի դառնալու,
Որ կարողանամ գործ առաջ տանել
Եւ մեր համայնքի դատը պաշտպանել,
Մի անգամ ընդ միշտ այս զուլումներին,
Այս զրկանքներին խստաս վերջ դնել.
Բայց դուք եկել էք վախի սարուկներ,
Ձեր շաքիցը դուք եր՛նչոլնե՛ր.
Ալեւոր գլխիս քարոզ էք կարդում
Էլի համբերել ու կրկին կրել
Անլուր զրկանքներն այդ անիրաւի...
Է՛հ, բաւական չէ՞. իմ ջանիլ-ջիւան
Արդիքըս խլեց, տարաւ ու իրան
Ճորտ, ստրուկ չինեց. եւ բաւական չէ՞
Ապրուստիս բոլոր, բոլո՛ր աղբիւրներն
Զորացուց իսպառ, ճրագըս մարեց...
Հիմայ էլ լպիրշ իւր ձեռքն է մեկնում
Դէպի իմ միակ, միա՛կ աչքի լոյս,
Միակ վերջին յոյս իմ կոյս աղջկան
Եւ ուզում նորան իւր տունը տանել
Իրբեւ աղախին, իբրեւ սաոր հարճ
Ծառայեցնելու իւր եւ իւրայնոց
Պիղծ հաճոյքներին... Նա ուրիշներին
Հրամայում է որ չաւազակեն,
Բայց ինքն աւազա՛կ... եւ աւազակից
Վատթար է վարւում . . .

(Զմրուխտն էլ ձայնակցում է Բեհրամին)

Միասին — *Ա՛խ, անգո՛ւթ Աւտաւած,*
Մեր այս հասակին, ճերմակ գլխներիս
Էլ ի՞նչ զուլումներ ես դու բերելու...
Ի՞նչպէս համբերենք, էլ ո՞նց դիմանանք։

Գիւղացիք—*Իրաւ են, եղբայր, ձեր տրտունջքները.*
Գիւքի ամին զուր է հակառակ ում.
Տանել համբերել է՛լ չի կարելի։

Բեհրամ — *Ի՞նչպէս կարող է մարդ իւր օջախի*
Սրբազան պատի, իւր կոյս աղջկայ
Պղծելն զգալ ու այն ձեռից տալ
Եւ իբրեւ ոչխար մինչ այդտեղ տոկալ։

Գիւղացիք — *Զէ՛, Բէհրամ ամի, դու միամիտ կաց,*
Մենք բոլորս էլ ամուր ենք կանգնած
Պաշտպանելու հէնց թէ քո պատիւը,
Թէ միանգամայն եւ մեր նամուսը.
Մեր նախնի ազատ իրաւունքները...
Ո՞ր մէկիս գլխին էդ անիրաւը
Պատուհաս չեղա... Փառքով ու պատով
Սկզբից նորան մենք ընդունեցինք
Մեր գլխին բէյա . . .

(փողոցից լսւում է մի քանի գնչուների երգը).

ԵՐԳ.

Սօլո — Մենք կապրինք միշտ դաշտերում
Ուր ազատ է ու սիրուն,
Ուր երջանիկ է կեանքը
Եւ իշխող լո՛կ մեր կամքը.
Խումբը — Ուր խաղում ենք ու խնդում,
Ո՛չ ոք մեզ չէ արգիլում։
Սօլո — Ո՛հ, ամենքն են նախանձում
Տեսնելով թէ ինչպէս մենք,
Որպէս ազատ թռչուններ,
Ճուռղում ենք դաշտերում
Խումբը — Եւ ապրում ենք միշտ սիրով,
Իրար ձեռք կարկառելով։
Սօլո — Այդպէս երբէք ո՛չ մի հոգս
Մեզ չէ ճնշում կամ նեղում,
Կեզդէ՛, ապրի ցեղը մեր
Երջանիկ ու բաղդաւոր.
Խումբը — Թող նախանձին մեր բաղդին
Հարուստ, իշխան թագաւոր...
Գիւղացիք — (որ լուռ լսում էին այդ երգը).
Երանի՛ դորանց.
Ահա իսկապէս երջանիկ մի ազգ,
Որ ազատ, անհոգ, քչով բաւական,
Իրանց թափառիկ վիճակից միշտ գոհ
Ապրում են իրանց համար ինքնիշխան,
Սիրով իրարու ձեռք կարկառելով.
Իրարու թասիր միշտ պաշտպանելով։

սոցիալ-տնտեսական քաղաքականութեան մէջ դաշնակցական ծրագիրը կանգնած է նոյպէս մաքուր-բուրժուական իդէօլոգիայի եւ ուսօպիական „սոցիալիզմի“ սկզբունքների վրայ։

Նոյն ազատամիտ «դաւանութիւնն»ունի ծրագիրը քաղաքականութեան ասպարիզում՝ պետութեան կազմակերպութեան խնդրում, որ արտայայտւում է բուրժուական դեմոկրատիզմով։ Նրա հէնց առաջին պահանջն է „ժողովրդական-ռամկավարական կառավարութիւն», հաստատուած «ամենն չափահաս բնակչի հաւասար ընտրողական իրաւունքին» [17] վրայ, որովհետեւ «ամբողջ կուլտուրական պատմութիւնը... ցոյց կուտայ՝ թէ յանձնել ամբողջ ժողովուրդին բախտը մէկ դասակարգի, որ իր կացութիւնը կարող է հաստատել ծագման, ֆիզիքական եւ նիւթական ուժի կամ թէ նոյնիսկ ուսման վրայ, տալ կառավարութեան ղեկը ո՛ր եւ է դասակարգի, կը նշանակէ այդ դասակարգը ճնշող տարր մ'ընել [16]։ Բոլորովին հեռու դասակարգային սկզբունքից յեղափոխութեան իդէօլոգիայի այդ դեղնցիկ եւ քաղցրահնչիւն «զուռնի» ձայնը թէ ինչ տոներից է բաղկացած, կարող է իսկոյն ըմբռնել նա, ով ամբողջ «կուլտուրական աշխարհի պատմութեան» հետ ծանօթ է, մանաւանդ՝ ով գիտէ այդ պատմութեան վրայ նայել ոչ թէ վերեւից դէպի ներքեւ՝ իդէալիստական աչքով, այլ ներքեւից դէպի վերեւ՝ իրական աչքով։ Պէտք չէ արխիւ ընկնել եւ անտղել բուրժուական դեմոկրատիայի գրի առնուած զանները. յիշեցնեմ օրինակ ֆրանսիական յեղափոխութեան մեծ մարգարէներին, որոնք իրենց թոյնոտ նետերը ուղղել էին "ծագման, ֆիզիքական եւ նիւթական ուժի» լրայ կառուցուած կառավարչական ձեւերին, եւ յեղափոխութեամբ ձեռք բերած այժմեան հասարակութեան „արդարութիւնները». կամ՝ երկրորդ խմպէրիայի ժամանակ գամբէտիստների՝ բուրժուական հասարակապետականների դեմոկրատական ծրագիրը... Ուրեմն հէնց նոյն „ամբողջ կուլտուրական աշխարհի պատմութիւնը“ ցոյց է տալիս, որ բուրժուական դեմոկրատիան հէնց որ հասնում է «իրական ուժի», դառնանում է իւր ծրագրին։ Հայ բուրժուական դեմոկրատիան չէ կարող ընդհանուր օրէնքից զարտուղել. հերաշքների հաւատալու դարն անցել է։

Այսպէս ուրեմն՝ Դաշնակցական ծրագիրը իր իրական-անմիջական այժմեականութեամբ, իտեալիստական ազգայնականութեամբ, ուսօպիական հեռանկարնոյ կանգնած է յեղափոխական բուրժուազիայի իդէօլոգիայի քաղաքական եւ սոցիալ-տնտեսական սկզբունքների վրայ։

Այժմ արդէն, երբ պարզեցինք մեզ Դաշնակցական կուսակցութեան ընդհանուր գոյնը, կարող ենք առանց խոչընդոտի հանդիպելու խօսել եւ նրա դիրքի մասին Կովկասում, որի վրայ կծանրանանք յաջորդ գրութեան մէջ։

Ս. Կասեան

ՄԻ ԿՈՂ

Մեր Ռուսաստանցի սոցիալ-դեմոկրատ ընկերները, որ գտնուում են այժմ Ակատուեվի տաժանակիր բանտում, հետեւեալ հրահրիչ ու բարձր կոչն են ուղղում Ռուսաստանի բոլոր յեղափոխականներին։ —

„Ապէտի նախընթաց օրը ցարի կառավարութիւնը երեսն է գալիս իր ամբողջ այլանդակերկութեան մէջ։ Նա շտապում է անել այն բոլորը, ինչ կարող է անել մի կառավարութիւն, որ մարմնացումն է ասիական դէսպոտիզմի եւ բուրժուազիայի ինտերէսների ծառայութեան։

„Գեղջկական մասսաների սովը ու աւերումը, հանուր ժողովրդի տգիտութիւնը, որ պահպանուում է տէրտէրների միջոցով. ալկոհոլիզմը՝ իբրև գլխաւոր միջոց տերունական հասոյթների. ղրաք, նաւաստիք ու լրտեսութիւն՝ իբրև գլխաւոր նիւթ տէրունական ծախսերի. դատապարտութիւններ մահուան, աքսոր, բանտ, տաժանակիր աշխատանք, մարմնային պատիժ. ատիկան ու ֆինօշենիկական կամայականութիւն. հարիւրաւոր բանւորների կոտորած (միապետութիւնը թշնամիներից—եապոնացիներից աւելի չէ խնայում ռուսական կեանքերը). դաւաճանութիւն՝ իբրև սիստեմատիկական քաղաքականութիւն բանւորական խնդրի շրջանում. գրգռումն ցեղական անմիտ թշնամութեան, եղբայրասպան գրգռումն մէկ ազգութեան միւսի դէմ. ներքին քաղաքականութիւնը՝ ապեկուլացիա ի հաշիւ ժողովրդի կուրութեան. կողոպուտ հայերի ազգային գոյքերի, վայրենի կոծանումն եւրոպական քաղաքակրթութեան Ֆինլանդիայում. կատարեալ և ընդհանուր քաղաքական տրկութիւն,—ահա՛ անկատար ցուցակն այն ամենի, որոնցով գծագրած կը լինեն պատմութեան էջերում ցարերի միապետութեան վերջին օրերը։

„Եապոնիայի հետ այս „հարկադրած“ պատերազմը — նրա վերջին խօսքն է. „հարկադրուած“ — աւազակային արտաքին քաղաքականութեամբ դժբախտ Զինաստանում!

„Ընկերնե՛ր, մեզ, հայրենիքից կտրուածներիս, խուլ կերպով հասնում են տեղեկութիւններ ժողովրդի վերաբերութեան մասին դէպի պատերազմը։ Մենք լսել ենք միայն պաշտօնական զեկուցումները հայրենասիրական զգացումների ոգեւորութեան մասին, ժողովրդի հաւատարիմ հպատակութեան ու շօվինիզմի ցոյցերի մասին։

„Եւ այդ օրգիայի մէջ ո՛չ մի ձայն գիտակցութեան, ո՛չ մի շեշտ յեղափոխական բողոքի։

„Այդպիսի բոպէ չէր, երբ մենք իշանք բեմից։ Մենք տեսնում էինք քաղաքային պրոլետարիատի մասսաներին, որ խաքնում էին իրանց խիստ ատելութիւնը դէպի միապետական խրմբակը։ Մենք թողինք յեղափոխական սոցիալ-դեմոկրատիայինայն նախընթաց օրայ մէջ, երբ նա պատրաստում էր կազմել իրբև պրոլետարիատի համա—Ռուսաստանի քաղաքական կուսակցութիւն, մի եւ ամբողջական իր ծրագրով, հաստատուն իր կանոնաւոր կազմակերպութեամբ։ Մեր աչքի առաջ դեռ պայթեց, իբրև տարրերքի չեղած հողմ, գործադուլները հարաւում։ Մեր աչքով դեռ տեսանք, ինչպէս միապետութեան ծառաների ձեռքով աւազակաբար կողոպտուած և քաղաքական իրաւազրկութեան հանգոյցի մէջ խեղդուող դայլափառ ազգութիւնները Ռուսաստանում համակրանքով մեկնում էին իրանց ձեռքը յեղափոխական պրոլետարիատին, իբրև միակ ճշմարիտ մարտնչող ազգութիւնների ազատագրութեան, և դեռ մեր լսողութեան մէջ չէին խլացել գարնանային աւտաբեր փոթորիկների արձագանգները—ցոյցերը։

„Եւ ահա այժմ, առնելով մաղթանքների, աղօթքների, ուղերձների, ցոյցերի, հրճուանքների լուրերը, որոնք ողջունում են պատերազմական կոտորածը և դրա ստեղծիչ—կայսրին ու Սիբիրի միապետին, Կիշինեւի ցարին ու Վիլնայի դահճին, Լեհական, Հայկական, Ֆինլանդական, համա-Ռուսաստանի խեղդողին և այլն, և այլն, և այլն, — կարելի է կարծել, թէ ռուս պրոլետարիատը փոխուել ու դարձել է ոչխարների կոյր հօտ, որ՝ պատերազմի „խաղաղասէր“ ցարիզմի համար մի նոր շանթարգել է։

„Մենք չը գիտենք, թէ խակապէս դրութիւնն ինչ է, և լաւ գիտենք, թէ ինչ արժէք ունին կառավարական տուած տեղեկութիւնը դէպի միապետական խրմբակը։ Մենք թողինք յեղափոխական սոցիալ-դեմոկրատիայինայն նախընթաց օրայ մէջ, երբ նա պատրաստում էր կազմել իրբև պրոլետարիատի համա—Ռուսաստանի քաղաքական կուսակցութիւն, մի եւ ամբողջական իր ծրագրով, հաստատուն իր կանոնաւոր կազմակերպութեամբ։ Մեր աչքի առաջ դեռ պայթեց, իբրև տարրերքի չեղած հողմ, գործադուլները հարաւում։ Մեր աչքով դեռ տեսանք, ինչպէս միապետութեան ծառաների ձեռքով աւազակաբար կողոպտուած և քաղաքական իրաւազրկութեան հանգոյցի մէջ խեղդուող դայլափառ ազգութիւնները Ռուսաստանում համակրանքով մեկնում էին իրանց ձեռքը յեղափոխական պրոլետարիատին, իբրև միակ ճշմարիտ մարտնչող ազգութիւնների ազատագրութեան, և դեռ մեր լսողութեան մէջ չէին խլացել գարնանային աւտաբեր փոթորիկների արձագանգները—ցոյցերը։

„Եւ ահա այժմ, առնելով մաղթանքների, աղօթքների, ուղերձների, ցոյցերի, հրճուանքների լուրերը, որոնք ողջունում են պատերազմական կոտորածը և դրա ստեղծիչ—կայսրին ու Սիբիրի միապետին, Կիշինեւի ցարին ու Վիլնայի դահճին, Լեհական, Հայկական, Ֆինլանդական, համա-Ռուսաստանի խեղդողին և այլն, և այլն, և այլն, — կարելի է կարծել, թէ ռուս պրոլետարիատը փոխուել ու դարձել է ոչխարների կոյր հօտ, որ՝ պատերազմի „խաղաղասէր“ ցարիզմի համար մի նոր շանթարգել է։

„Մենք չը գիտենք, թէ խակապէս դրութիւնն ինչ է, և լաւ գիտենք, թէ ինչ արժէք ունին կառավարական տուած տեղեկու-

---

Բեհրամ—Եւ վա՛յ մեր գլխին, դրանց չափ չը կանք։
Զմրուխտ — Փոխանակ իրար ձեռք կառկառելու՝
Մենք, ընդհակառակն, իրար տուն քանդում,
Իրար նամուս ենք ոտնատակ տալիս,
Ուժասպառ անում գեղը հիմնովին
Ու այդպէս թեւեր տալիս իշխանին՝
Մեր գլխից վերեւ սաւառնել, հափռել,
Գոփել ու ջոփել, գճռել ամեն բան,
Ամեն իրաւունք ոտնատակ տալով
Մինչեւ հայրենի մեր սուրբ օջախներն
Պղծելու չափ էլ առաջ գնալու...

Մի գիւղացի—Չէ՛, Զմրուխտ բաջի, անցան այլեւս
Մեր յիմարութեանց այդ ոսկի օրերը.
Իշխանը իրան վերջին այս քայլով
Մեր աչքը բացեց. մեզ վարպա դարձրեց
Մեր սրտի է՛ն սուրբ լարին զարկելով...
Օջախի պղծո՛ւմ. այդ չէր սպասւում...
Օ՛, թոյլ չենք տալ նրան այդ քայլը անել.
Կը խեղդենք նրա ոտնձգութիւնն
Հէնց իրա բնում, միահամուռ ոյժով...
Միամիտ եղէք . . .

Գիւղացիք — Զափից անցնողը
Անպատիժ չի մնալ. դուք անհոգ կացէք։
(հեռից լսւում է Լեւոնի աղաղակն ու կոչը).

Լեւոն — Գալիս են, գալի՛ս, ա՛խ, ամա՛ն. հայրիկ,
Դէ պատրաստ կացէք, բահ, բրիչ վերցրէք.
Զարդ-փչուը արէք անիրաւներին ..
Իմ նշանածին, իմ ազիզ եարին
Ձեռքից մի տուէք...

(Այդ բանը լսելով բոլորը շփոթւում են մի բոպէ. միայն Զմրուխտը վեր ցատկելով՝ ինքնավստահ եւ կատաղի ձայնով գոչում է)

Զմրուխտ — Գալի՛ս են, թո՛ղ գան . . .

(Սկսում է մարդուն ու գիւղացոց մէկ մէկ փայտ. թի, բահ եւայլն ցրւել. ինքն էլ վերցնում է մի մանակ եւ դռան առաջը կտրում։ Ներսից լսւում է Սալբիի վայնասունը. լացն ու կոծը եւ ընդհատ խօսքեր ու բացականչութիւններ).

Սալբի — Ա՛խ, վայ իմ օրին... վա՛յ իմ արեւին...
Վա՛յ մեր նամուսին... վայ, վայ. վայ, ա՛խ. վայ.

Զմրուխտ — (կատաղի ձայնով գոչում է)
Լռի՛ր, ա՛յ աղջիկ... ի՞նչ ես վայ կանչում...

Բեհրամ — (դիմելով կանգնած գիւղացոց).
Դէ՛հ, ա՛յ ախպէրներ, իմ դարդի ընկեր,
Հասել է ժամը էլ ինքնօգնութեան.
Կորովի եղէք. գեղի թասիբը
Գետին մի՛ գցէք... դէ պաչտ պանեցէք...

Գիւղացիք — Միամիտ եղէք մեր կեանքը կըտանք,
Օջախի պատիւն պղծել չենք թոյլ տալ...
(Տան վրայ են յարձակւում երկու զինուորականներ եւ Իշխանի ծառայողների մի խումբն գոռում-գոչիւնով).

Զինուոր — Տե՛ս անղգամին նա է դէմ կանգնել.
Նա էլ է ուզում մեզ ընդդիմադրել...

Զմրուխտ — Այո՛, ես միայն, թոյլ արարածս
Պաշտպան կը կանգնեմ իմ խեղճ օջախին,
Կը մարտնչեմ իմ պիղծ թշնամու դէմ
Եւ մինչեւ վերջին շունչս չը փչեմ,
Թոյլ չեմ տալ նրան չէմքս ոտք կոխել։

Զինուորներ — Հեռո՛ւ անզգամ. մի վայրահաչիլ
Թէ չես ուզում հէնց չան սատակ լինել։

Բեհրամ — Լռեցէ՛ք. վատեր, գարշ արարածներ.
Ձեր յոխորտանքից էլ մենք չենք վախում.
Ձեր գազանութիւնների ժամն է անցել...
Շուտով ամենքիդ մենք վերջ կը դնենք...

Ծառաներն — Մի՛ համարձակւէք անպատիւ խօսել
Եւ հեռու կացէք. զուր է ձեր ջանքը.
Թանգ է մեզ համար իշխանի կամքը.
Մեր կեանքի գնով այն կը կատարենք։

Զմրուխտ — Չը համարձակւէք չէմքս ոտք կոխել
Թէ չէ ջարդ-փչուր կանեմ ամենիդ.
Այ դուք զազրելի վատ ընչաքաղցներ...

(Ծառաները յարձակւում են. Զմրուխտը կռիւի կերպով դիմադրում է, բայց շուտով վայր է ընկնում մի մահակի հարուածից։ Առաջ են վազում Բեհրամն ու գիւղացիք. միւս կողմից վրայ են պրծնում զինուորներն ու կրակ անում. քիչ թեթեւ կուռից յետոյ երկուսին վիրաւորելով ցրւում են բոլորին։ Ծառաներն ներս են գնում եւ դուրս բերում ուշաթափ Սալբիին ու խրոխտալով գնում են գոչելով). --

Ծառաներն — Ահա ձեզ խրատ...

(Միւս կողմից երեւում է Լեւոնն կատաղի գոչիւնով)

Լեւոն — Է՛յ վայրենիներ...
Ա՛յ դուք գիշատիչ, անարգ գազաններ...

Զինուորներ — Մի՛ վայրահաչիլ եւ մի՛ մօտենար
Թէ քո կեանքը թանգ ես գնահատում։

Լեւոն — Չը մօտենա՛լ եւ թոյլ տալ ձեր լպիրշ
Չոքերում մնայ իմ ազիզ եարը.
Իմ սէրն ու կեանքը... այդ ես չեմ կարող։
Թո՛ղ խողխողեմ ես դրա ոտքի տակ...
Հոգ չէ՛ ինձ համար, սակայն յուսով եմ,
Վաղը կը ծագէ մեզ նոր արշալոյս
Եւ իմ եղբայրներն մեր գեղացոց հետ
Ձեռք ձեռքի տրւած, դիակս կոխելով
Կը խուժեն ձեզ վրայ եւ կը տապալեն
Ձեր իշխանութիւնն... Իմ ազիզ եարին,
Իմ խեղճ Սալբիին դեռեւս չըպղծած
Կը փրկեն ձեր այդ լպիրշ ձեռքերից...

(Ցարձակւում է)

(Շարունակելի) Վարագոյրն իջնում է

թիւնները։ Բայց և այնպէս հարկ ենք համարում ներկայ կոչն ուղղելմեր բոլոր յեղափոխական ընկերներին։

«Պատերազմը մեր կուսակցութեան համար առաջ է բերում մէկ ամենակարեւոր պայման։ Այս վճռական րոպէին յեղափոխական սոցիալ-դէմոկրատիան պէտք է կանգնած լինի իր պատմական կոչման բարձրութեան վրայ։

«1877 թ. կառավարութեան համար դեռ դիւրին էր կոտորածը զարդարել մարդասիրական և մինչև իսկ ազատամիտ զգեստով («եղբայր-սլաւներ, ազատագրութիւն լծից» և այլն)։ Բայց հիմա, երբ խնդիրը միայն կայանում է «մեր առևտրական ինտերէսներում», այսինքն մեր վաճառականների շահերում, — և այս հանրական սպանութիւններն այդ «կուլտուրական նպատակով» պաշտօնական ֆրազաբանութիւնը դարձնում է մի տեսակ հայրենական պատերազմ։

«Սոցիալ-դէմոկրատիան ամենալայն և ժրաջան ագիտացիայով պէտք է լուսաբանէ միի. տարիզմի և պատերազմի նշանակութիւնը, որ տալիս են միայն մահ, աղքատութիւն և արցունք. պէտք է մերկացնէ իսկական աստառը չովինիզմի ճրճռան ֆրազների, պէտք է յիշեցնէ, թէ ո՛ւմ ուսերի վրայ են ընկնում քաղաքային վարչութիւնների առատաձեռն նուիրատուութիւնները։

«Հաւատարիմ հպատակութեան ցոյցերին, մենք պէտք է պատասխանենք ամեն կողմերում յեղափոխական մասսայի ցոյցերով։ Կարմիր դրօշը մենք պէտք է բարձրացնենք ամեն տեղ, ուր բարձրացնում են «աղգայինը»։

«Ռուսական մամուլի հայրենասիրական ֆեսֆեսոցին «Ռուսաստանի ինտերէսների մասին Հեռաւոր Արևելքում»։ մենք պատասխանե՛նք ժողովրդի կուլտուրական անթիւ պահանջների ցուցմունքով։ Հերի՞ք է արիւն կապիտալիստական Մոլոխի վաճառականների համար... Թող կորչի՞ պատերազմ և միլիտարիզմ։

«Մարդատեաց պառոցներին «Ռուսաստանի թշնամիներիս» մասին՝ մենք կը պատասխանենք այս կոչով — «պրոլէտարիներ՞ բոլոր երկիրների, միացէ՛ք»։

«Պաշտօնական աղմուկին՝ հաւատարիմ հպատակութեան զգացումների մասին, որոնք միացնում են «բոլոր ռուսներին առանց խտրութեան ազգութիւնների», մենք կը պատասխանենք ճշմարիտ արտայայտութեամբ այն զգացման, որ միացնում է ամեն ազգութիւններին Ռուսաստանում։ Մենք կը պատասխանենք. — թող կորչի՞ միապետութիւն։

«Մեզ մի բոպէ անդամ չէ լքում այն խորին յոյսն ու հաւատութիւնը, որ յեղափոխական պրոլէտարիատի հզօր ձայնը բացարձակաբար ամբող Ռուսաստանի դիմաց կարձակէ (և գուցէ արդէն արձակում է) իր դատապարտութիւնը միապետութեան նոր սճիրի դէմ։ Եւ մենք, որ դուրս ենք ձգւած շարքերից, առնում ենք այն բոլորը, ինչ կարող ենք. — Թո՛ղ այս կոչը լինի մեր ցոյցն ընդդէմ ցարերի կառավարութեան։ Թո՛ղ մեր ձայնը միախառնւէ Ռուսաստանի պրոլէտարական ընդհանրութեան բացարձակ բողոքի հետ։

«Թո՛ղ կորչի՞ միլիտարիզմ. թո՛ղ կորչի՞ միապետութիւն։ Կեցցէ՛ քաղաքական ազատութիւն։ Կեցցէ՛ միջազգային յեղափոխական սոցիալ-դէմոկրատիա»։

(Ստորագրութիւններ)

Փետրուար 1904 թ.
Ակատուեվի Տաժանակիր Բանտ

«ՀՆՉԱԿ»

(No 4—6. Ապրիլ—Մայիս, 1904.)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

X

ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ ԷԼ

Բիբի-Հէյբաթը մի փոքրիկ արուարձան է, Բագուից մօտ 3 վերստ հեռաւորութեան վրայ։ Այդտեղի հողը նաւթաբեր է։ Այդտեղ կան մօտ 30 նաւթահանքեր, որոնց թւում և մի քանի գործարաններ (заводъ) ու արհեստանոցներ։ Ամեն մի նաւթահանք էլ ունի իւր յատուկ արհեստանոցը, ուր պատրաստւում են ու նորոգւում վանալան գործիքներ և մեքենաներ իրենց պէտքերի համար գլխաւորապէս։ Այդ նաւթահանքերում ու գործարաններում՝ ինչպէս և արհեստանոցներում՝ աշխատում են մօտ 5000 բանւորներ Կովկասի և Ռուսաստանի, ինչպէս նաև Պարսկաստանի, ազգութիւններից։ Դրանց թւում կան մօտաւորապէս 1500 հայ բանւորներ, որոնց մեծամասնութիւնը եկած է Կովկասի վանալան նահանգների վանական գիւղերից. դրանց մէջ կան և՛ տաճկահայ բանւորներ թւով մօտ 50։

Մի կողմից վարելահողերի սակաւութիւնը, երկրագործութեամբ զբաղում տուն պահելու անկարելութիւնը, միւս կողմից գիւղական մանր արհեստների այլևս անպէտք հանդիսանալը — շնորհով խոշոր արդիւնաբերութեան ապրանքների ժան գնով գիւղերում մուտք գործելուն — գիւղացիներին հնարաւորութիւն չեն տալիս իրենց ծննդավայրում մի կերպ քարշ տալ իրենց գառն կեանքը։

Բացի այդ, ապրելով մի սև, չարքաշ կեանքում, նրանք ենթակայ են ամեն տեսակ զրկանքների և կեղեքումների, որոնք կատարում են բազմազան գիշատիչների կողմից։ Նրանց անխիղճ կերպով, ամեն քայլափոխում, ճնշում են ռուս կամ հայ պաշտօնեաները, որոնց պահանջներին ու կաշառքներին չափ ու սահման դնող չը կայ։ Վամպիրի նման նրանց արիւնը ծծում են գիւղի «զօռբաները», «իշխանները», «բազարի մարդիկ» — փողատէրերը — և դրանցից ակամայ ստացած պարտքերի անասելի չափի հասած տոկոսների ծանրութեան տակ տքնում են գիւղացիները։ Վերջիններին հաղստահարում են հայ հոգևորականութիւնը, վանքերը՝ աւելի մեծ չափերով։ Աւելի անգութ կերպով հարստահարում է և՛ ռուս բռնակալ միապետութիւնը, իւր «պատակների այդ «պաշտպանը», որի դրած բազմաթիւ հարկերի ծանրութեան տակ այսօր հեծում է Կովկասի ամբողջ ազգաբնակութիւնը, հեծում են և՛ լայնատարած Ռուսաստանի բոլոր, բոլոր գիւղացի բնակիչները։

Այո՛, գիւղացին այսօր անկարող է ապրել իւր հայրենիքում, իւր տանը։

Աւ ահա, թողած իւր սիրելիներին, սրահի մի անկիւնը գըցած այլևս անպէտք հանդիսացած նահապետական, դարաւոր գութանն, խոփն ու գերանդին, թողած իւր քաղցրիկ բնականավայրը, որի բնութիւնը սքանչելի է, գեղեցիկ. հրաժեշտ տալով իւր ծանօթ, սիրելի վայրերին, նրա բազմերանգ ծաղիկներով զարդարուած մարգագետիններին, ուր նա ազատ, մաքուր օդ էր շնչում. սառնորակ աղբիւրներին, ուր ամառւայ տապերին նա իւր ծարաւն էր յագեցնում. հրաժեշտ տալով իւր հայրենիքի դաշտերը, խորհրդաւոր անտառներին և մռայլ, վիթխարի լեռներին ու խոր-խոր ձորերին, ուր ամեն ինչ վեհ է, բարձր, ուր մարդ արարածն ինքը, կարծես, ապրելով նրանց մէջ, հոգեպէս բարձրանում է առօրեայ կեանքի մանր-մունր հաշիւներից և մոռացած բոլոր հոգսերն ու դարտերը՝ ընկնում է մի այլ աշխարհ, նոյնպէս վեհ, նոյնպէս բարձր... մնաս բարև ասելով իւր հայրենի երկրի բոլոր սրբազան, նուիրական վայրերին ու բնութեան հրաշալիքներին—նա, գիւղացին, ասում ենք, արտասուքը աչքերին, վշտացած սրտով, պարտքերը վճարելու և մի քիչ ազատ շունչ քաշելու վարդագոյն յոյսերով՝ հեռանում է, գալիս արդիւնաբերական քաղաքները աշխատելու, իւր ֆիզիքական ոյժը ամենաաժան գնով ծախելու կապիտալիստին։ Հպարտ լեզուն էլ այսօր իջած իւր հըպարտ լեռներից, նոյնն է անում։

Ինչո՞ւ էք թողել գիւղը, — հարցնում ես գիւղացուն։ Նա տալիս է իւր անպաճոյճ, պարզ պատասխանը, ինչպէս ինքն է հասկանում։

— Ֆը մատաղ, չէնքմը գործ կայ ոչ, հունձ անինք, էկալընք շահար գործ ճարելի հետի, — ասում է մէկը։

— Խազէյին չան, ոնց անենք, չենք կարում գեղըմ ապրել, փող չունինք, որ կարենանք մեր քուլֆաթը պահել, — ասում է երկրորդը։

— Ծիրացու չան, ես ինչ գիդամ որ մինն ասեմ, գեղըմը պարտք ունիմ, սանատներ ունիմ, քեասիբ եմ, ըրեխանց տէր եմ, տանտէր եմ, հրէ գամբակայ ըստի եմ եկել, որ կարենամ, թէ Աստած աչքովն, մրեցոց փող յետ գցել իմ ցաւերի համար, — պատասխանում է երրորդը, և այլն։

Եւ այդ պատասխանները տալիս, նրա միտքը նորից սլանում է դէպի իւր սիրելիները, սքանչելի բնակավայրը. նա, այդ ժամանակ, տեսնում ես, լըշանում է, աչքերը գցում գետին և կամացուկ հառաչում, որ չը նկատւի։ Իսկ այդ հառաչը, ա՜հ, դարարդէն «տնտեսապէս քայքայուղ թշուառ գիւղացու վշտալից ճիչն է, ազազակը, որը առաջացել է ներկայումս տիրող քաղաքական, տնտեսական անտանելի կարգերից, կեանքից, նրա խիստ, անողոք հարուած-օրէնքներից։ Եւ այդ օրէնքներն են դարձեալ, որ ժամանակին վերջ են դնելու բոլոր տանջուածների, բոլոր հարստահարուածների համանման հառաչներին. նրանք վերջ են դընելու նաև, այդպիսով, ամեն կարգի վամպիրներին, պարազիտներին. նրանք բերելու են ամենի համար մի նոր կեանք, ազատ, երջանիկ եթէ... եթէ գիւղացիք գիտակից լինելով իրենց շահերին, չանք անեն, աշխատանք թափեն արագացնելու գալիք հրաշալի ապագան։

Այո՛, գիւղացին գալիս է «շահար գործի հետիս», կարծելով, որ իւր վարդագոյն յոյսերը կերականան և այլևս չի պատահելու այնպիսի գիշատիչների, որպիսիք կային գիւղում։ Բայց մեր միամիտ գիւղացին հէնց առաջին քայլափոխում հանդիպում է փոքրիկ կաշառակերին։ Վերջինս գործարանի կամ նաւթահանքի գործակատարն է կամ հոր փորող վարպետը, որ նրան մի տեղ, պաշտօն, տալու համար նրանից բուբլիներ են շորթում, որը երբեմն խրօնիկական է դառնում — ամեն ամսւայ ռոճիկի մի որոշ մասը ստանալով։

Բագու Անիրմանա

(Շարունակելի)

Կալացի Հնչ. Մասնաճիւղի բացած հանգանակութեան արդիւնքը եղած է 125 ֆնանք։

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Търг. печат. и лит. Меркуръ—Русе.